ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 2050-Ա/2 «04» հոկտեմբերի, 2023 թ.

ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 2045-Ա/2 հրամանով հաստատված «Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգի» 1-ին կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Կազմակերպել գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի ընտրության մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«04» հոկտեմբերի, 2023 թ.
N 2050-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն կազմակերպում է գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի կողմից, կազմակերպության գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի/սարքավորումների ձեռք բերման նպատակով, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 2045-Ա/2 հրամանով հաստատված «Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգի»:

Յուրաքանչյուր գիտական սարքի/սարքավորման ձեռք բերման համար կարող է տրամադրվել մինչև 20,000,000.0 (քսան միլիոն) ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն:

Մրցույթի հայտի ձևը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.hesc.am «Գիտական գործունեություն» բաժնի «Հայտերի ձևեր» ենթաբաժնում:

Հայտը ներկայացվում է կազմակերպության ղեկավարի պաշտոնական գրությամբ, գիտական ստորաբաժանման՝ տվյալ սարքով/սարքավորումով վերազինման անհրաժեշտության և կազմակերպության հետագա զարգացման համար դրա կարևորության նշումով, առձեռն (ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 708

սենյակ), փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների փողոց 22, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե) կամ էլեկտրոնային փոստով (info@hesc.am):

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2023 թվականի հոկտեմբերի 27-ը:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից (հեռախոս՝ 010-21-01-40 (*113; *116), էլեկտրոնային փոստ՝ support@hesc.am):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն